

Ա. ԱԳԱՄՅԱՆ

ՎՐԱՑ ՀԵՐԱԿԼ Բ. ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՏՊԱԳՐԻԶ  
ՊՈՂՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամական սերտ հարաբերությունների վերաբերյալ բառականին հարուստ նյութ կա Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարանի արխիվի բաժնում: Այդ նյութի մի զգալի մասը մինչև օրս, վերիպելով մասնագետների ուշադրությունից, մնացել է շուտուհասարկված և անտիպ: Այդպիսիներից մեկն է անա վրաց Հերակլ Բ. Թագավորի (1744—1798) և տպագրություն արձևատի հմուտ մասնագետ վարպետ Պողոս Հովհաննիսյանի (Արապյան, 1742—1835) միջև 1781 թվականին կնքված պայմանագիրը՝ Թբիլիսիի վրացական տպարանը վերակառուցելու և շահագործման հանձնելու մասին<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, 18-րդ դարի 50-ական թվականներից հետո, Հերակլ Բ. Թագավորի տիրապետության տակ գտնված արևելյան Վրաստանում անսկզբունք, գիտությունը և կուլտուրան ապրեցին վերելքի որոշ շրջան: Հերակլ Բ. Թագավորը հատուկ ուշադրություն դարձրեց նաև վրացական տպագրության վրա, մեծ ջանք գործադրելով հատկապես Թբիլիսիի հին տպարանը վերակառուցելու և շահագործման հանձնելու ուղղությամբ:

Այդ ժամանակ տպագրության արձևատի մեջ ճանաչված վարպետ էր Պողոս Հովհաննիսյանը, որը Կ. Պոլսում ուներ սեփական տպարան և հրատարակչություն:

Վարպետ Պողոսը հայկական տպագրության գործում բացառիկ դեր է խաղացել: Նրա պատր, հայրը, կորայրները, որդիները և ազգականներից ոմանք նույնպես զբաղվել են հայ տպագրության գործով: Սակայն նրանց բոլորի մեջ ամենաբնիկունակը, ամենաաշխատասերը և ամենաբեղմնավորը կղել է վարպետ Պողոսը: Նա ժամանակին ճանաչված է կղել որպես լավ փորագրիչ, տառեր ձուլող, տառերի նոր ձևեր հորինող, թռչնակերպ և կենդանակերպ գողտրիկ գլխատառեր պատրաստող և այլն: Նրա տպարանում տպագրվել են հայերեն, թյուրքերեն և այլ լեզուներով շատ գրքեր: Վարպետ Պողոսի ձեռքի տակ աշակերակել, սովորել և վարպետ են դարձել մի շարք մարդիկ: Նա շատ կարևոր ծառայություն է մատուցել ոչ միայն հայ

<sup>1</sup> Չնայած պայմանագրում նշված է, թե այդ տպարանը նոր է հիմնվում, բայց հավասարի ազդյունները վկայում են, որ այն հիմնված է կղել 1709 թ., սակայն 1722 թվականից սկսած մատնված է կղել անդործություն: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ վրացական առաջին տպարանը հիմնվել է 1629 թվականին՝ Հասմուզ, հաջորդը՝ 1705 թվականին՝ Մոսկովյում, սակայն 1709 թվականին՝ Թբիլիսիում, իսկ 1737—1744 թվականներին՝ Մոսկովյում և Պետերբուրգում:



կաւլաուրայի զարգացմանը, այլև որոշ գեր է խաղացել նաև վրաց ու այլ ժողովուրդների տպագրական գործի ասպարեզում<sup>1</sup>:

Եվ անա Հերակլ Բ. թագավորը, որ վաղուց էր լսել Պողոս Հովհաննիսյանի մասին, 1781 թ. Կ. Պոլիս է ուղարկում իր լիազոր Մելիտոնին՝ Պողոսին թրխիսի հրավիրելու: Նույն թվականին Մահաեսի Մելիտոնը հասնելով Կ. Պոլիս, բանակցում է վարպետ Պողոսի հետ, և նրանք համաձայնելով պայմանագիր են կնքում: Հենց այդ պայմանագիրն է, որ պահպանվել է Հայկական ՄՍՌ Մատենագարանի արխիվում: Այն բաղկացած է երկու օրինակից. մեկը հայերեն, իսկ մյուսը՝ հայատառ թյուրքերեն: Հայերեն պայմանագիրն ստորագրել է Պողոս դպիր Հովհաննիսյանը և վավերացրել հայերեն, ռուսերեն, թյուրքերեն ու հունարեն լեզուներով իր անունը կրող մի կնիքով: Պայմանագիրն ստորագրել են նաև երկու վկաներ՝ հունարեն ստորագրութուններով: Հայատառ թյուրքերեն պայմանագիրը հաստատված է Հերակլ թագավորի՝ հինգլեզվյա (վրացերեն, հայերեն, լատիներեն, հունարեն և թյուրքերեն) կնիքով: Այս պայմանագրի վերջում ևս գրված են վկաների ստորագրութուններ (հայերեն, հունարեն):

Պայմանագրի բովանդակութունը հետևյալն է. տպագրության վարպետ Պողոսը պարտավորվում է մեկ սպասավորով մեկնել թրխիսի՝ վրացական հին տպարանը վերակառուցելու, վրացական նոր ձևի տառեր ձուլելու, գրաշար և տպագրիչ վարպետներ պատրաստելու և տպագրական այլ աշխատանքներ կատարելու: Հրավիրող կողմը պարտավորվում է այդ աշխատանքների գիմաց վարպետ Պողոսին Հերակլի գանձարանից վճարել տարեկան երեք հազար հինգ հարյուր զուռուշ, իսկ նրա սպասավորին՝ հարյուր հիսուն զուռուշ: Ըստ սրում, նրանք իրավունք են ունեցել նախապես ստանալու մեկ տարվա լրիվ աշխատավարձ: Ինչ վերաբերում է Կ. Պոլսից թրխիսի և թրխիսից Կ. Պոլիս գնալ-գալու բոլոր ծախսերին, ապա դրանք ևս, ըստ պայմանագրի, հոգացվել են թագավորական գանձարանի հաշվին:

Վարպետ Պողոսը և իր սպասավորը 1781 թ. գալիս են թրխիսի և մեծ կոանդով անցնում տպարանի վերակառուցման աշխատանքին: Նրանք փոխում են տպարանի հնացած գործիքները, ձուլում են վրացերեն տառերի նոր ձևեր և տեղացի մի քանի աշակերտների օգնությամբ վերակառուցում տպագրության աշխատանքը:

1782 թ. Պողոսի և նրա աշակերտների կոանդուն աշխատանքի շնորհիվ, լույս է տեսնում 30 էջից բաղկացած մի բրտշյուր՝ «Գովք նոր տպարանի» խորագրով:

Մեկ տարի հետո, 1783 թ., նույն տպարանում վարպետ Պողոսը, Հերակլ Բ-ի կարգադրությամբ, տպագրում է 320 էջից բաղկացած հաջորդ գիրքը՝ «Կոնդակի» (Մաշտոց) վերնագրով:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ գրքի սկզբում և վերջում հիշատակվում է վարպետ Պողոսը որպես հերակլյան տպարանի վերակառուցող<sup>2</sup>:

<sup>1</sup> Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946 թ., էջ 141, 178—183:

<sup>2</sup> Հիշյալ գրքերը վրացերեն լեզվով տպագրված 57 և 58-րդ գրքերն են: Նշված գրքերից մեկական օրինակ պահվում են Լենինգրադի Սալտիկով-Շչեգրինի անվան գրադարանում: Սույն տվյալները քաղել ենք 1941 թ. թրխիսում հրատարակված «Վրաց գիրքը» (վրացերեն լեզվով) աշխատութունից:



Այդ տպարանի և նշված հրատարակությունների պատմությունն ու-  
սուՄնասիրելու տեսակետից ուշագրավ վկայությունների ևնք հանդիպում  
նաև Ղուկաս կաթողիկոսի 1783 թվականի մի կոնդակում: Այդ կոնդակով  
Ղուկաս կաթողիկոսը շնորհավորում է Հերակլ Բ-ին տպագրական գործու-  
նեություն ընագալխաում նրա կատարած աշխատանքների կապակցու-  
թյամբ՝ նկատի ունենալով նշված տպարանը և նրա տպագրությունները:



«Գովք նոր տպարանի» բրոշյուրի առաջին էջը:

Կաթողիկոսն ընդգծելով տպարանի վերակառուցման ընթացքում հաղթա-  
հարած գծվարությունները, կատարած մեծ ծախսերը և այդ տպարանի հա-  
տարակական գերը, գովարանում է այդ գործի նախաձեռնող և կազմակեր-  
պող գրասեր Հերակլ Թագավորին և նոր հաջողություններ է ցանկանում  
նրան այդ ուղղությամբ:

Վավերագրում Ղուկաս կաթողիկոսը հիշատակում է նաև, որ ստացել  
է Հերակլ Թագավորի հիշյալ տպարանում տպագրված առաջին գիրքը և  
շատ է հավանել տպագրությունը: Այդ մասին նա գրում է.

«... Եւ մեր ևս, լսելով միշտ զբազում համբաւս բարութեան զմե-  
ծութենէ ձերմէ, ուրախանամք սգով չափ և պարարիմք ըստ իմաստնոյն  
բանի: Քանզի բաց ի բարեհամբաւութեանց ձերոց գրէթէ այլ ոչ գոյ մեզ  
ներկայապէս լուրք սրտադիւրիչք և բանք ուրախապիթք, այլ յամենուստ  
կուսէ զշտանամք և մաշիմք: Իսկ և նարդենիս յաւելիք ի վերայ յօգնազան



մեծագործութեանցդ հաստատել ի յօրհնեցելումդ քաղաքօջ տպագրատունը: Զոր և բարեջան հեռեմամբ և ծանր ծախուք ի կատարումն ամեր, առ ի յաճախումն հոգեշահ գրոց, որք ի յօգտութիւն քրիստոսականդ բանաւոր հօտի և եկեղեցւոյ սրբոյ: Զոր և մեք իմացեալ՝ յոյժ ուրախացաք: Եւ մանաւանդ ի նմա նորապէս տպագրեցեալ գտեարակ մի ևս ընկալաք և թարգմանեցուցաք, և տեսանելով զպարգութիւն և զբարեձևութիւն գրոցն, կարբի հաւանեցաք: Եւ ի ձեռն այսօրիկ օրհնանուէր թղթոյ շնորհաւորեմ զնորահաստատ և զվայելչակերտ տպարանդ...»<sup>1</sup>:

Ինչպէս նշեցինք, հիշյալ պայմանագիրը կնքվել է 1781 թվականին: Սակայն բանասեր Գարեգին Լևոնյանը իր «Հայ գիրքը և տպագրութեան արվեստը» ուսումնասիրութեան մեջ նշում է, որ Հերակլ թագավորը Պողոս Արապյանին (Հովհաննիսյան) Թբիլիսի է հրավիրել վրացական տառերը բարեփոխելու 1774 թվականին. վերջինս գալով Թբիլիսի՝ կատարել է Հերակլ թագավորի հանձնարարութեանը, վարձատրութեան է ստացել և հայոց կաթողիկոսի հրավերով անցել է Էջմիածին՝ վանքի նորարաց տպարանին տառեր տալու համար:

Գարեգին Լևոնյանը պատմական այդ տեղեկութեաններին համար որպէս աղբյուր նշում է Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը<sup>2</sup>, որտեղ 1774 թվականին վերաբերող փաստաթղթերի մեջ, իրօք, տվյալներ կան վարպետ Պողոսի Էջմիածին մեկնելու, վանքի տպարանին նոր տառեր տալու մասին, սակայն այնտեղ ոչ մի խոսք չկա վրացական տառերի բարեփոխման մասին: Ո՞րտեղից է վերցրել Գ. Լևոնյանն իր այդ տեղեկութեանը՝ չկարողացանք պարզել: Հավանաբար Պողոս Հովհաննիսյանը տպագրական գործով մի քանի անգամ է եղել Հերակլ թագավորի մոտ:

Ստորև բերում ենք Հերակլ Բ-ի և վարպետ Պողոսի միջև 1781 թ. կնքված պայմանագրի հայերեն մասի բնագիրը և լուսանկարը:

«Աստուծով ի թուին 1781 մայիսի 23 եղև ի Կոստանդնուպոլիս:

Զօրութիւն պայմանական գրոյս այս է, որ ըստ հրամանի Քրիստոսապատկ Արքային Հերակլեայ<sup>3</sup> վրաց, որ ի Թիֆլիս, այսու գաշամբ: Որես, ներքոյ գրեալ տպագրիչ Պողոս գպիրս, ի վերոյ թուոյն ընդ սոյն Մահտեսի Մելիտոնին գնալոց եմ մէկ սպասաւորաւ ի մայրաքաղաքն Թիֆլիս՝ առ սոս գերագահութեանն նորին և անդ տպագրատուն իմն հաստատեալ զբոլոր տառս վրաց ի չէլիկ փորագրեալ, ապա ի պղինձ ֆօրմայ արարեալ, և անտի յարձիճ թափեալ, զոր ինչ գիրք խնդրեսցեն՝ գտաոս շարեալ լաւագոյն մրով ի թէսղեազ կալեալ գիրք տպելոց եմ, ըստ արհեստի պատկանի տպագրչաց և քանի աշակերտ որ յանձնեսցեն ինձ, զբովանդակ արհեստն տպագրութեան, աննախանձ և առանց ինչ թագուցանելոյ ուսուցանել նոցա, մինչև առանձին զնոսին հմուտ տպագրիչ առնելոյ ջան գնելոց

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական գրիվան, թղթ. № 214, վավ. № 279:

<sup>2</sup> Գյուտ ա. քահանա Աղանյանց, Դիվան հայոց պատմութեան, Թիֆլիս, 1908 թ., գիրք Ը, էջ 304:

<sup>3</sup> Հերակլ թագավորի անունը գրված է վավերագրի առաջին էջի վերին աջ անկյունում. փաստաթղթի մեջ նրա անունը գործածելու հարկ եղած դեպքում անվան տեղ պատճառ նշան է գրված: Հնում ընդունված է եղել թագավորների և կաթողիկոսների անունը գրութեաններին մեջ գրելու դեպքում պատվո նշան դնել անվան փոխարեն:







եմ, ըստ ընդունակութեան իւրեանց, բաց ի ծաղկագրաց և ի պատկերաց և ի կարմիր ներկով գլխագրաց և կամ ի խորագրաց, զի ես ոչ գիտեմ գիրագրութիւնս ծաղկագրաց և պատկերաց, և գլխաւունուածս կարմիր ներկին: Բայց զգրեանս այլոց ազգաց փորագրելոյ կամ ուսուցանելոյ չունիմ ինչ պարտականութիւն: Բայց թէ ինքեանք խնդրեսցեն և ես եթէ կարող լինիցիմ աստուծով փորագրութեան, զայնս ևս ի լոյս ածելոյ ջան դնելոց եմ, եթէ ժամանակն ներեսցէ, զի այս գործ երկար ժամանակի կարօտանայ լրութեան, Եւ ահա այս է եղանակ դաշնագրութեան մերոյ, որ ընդ Մահաեսի Մելիտանին մէկ տարին երեք հազար հինգ հարիւր զուուշի վարձ հատեալ ձեռագիր առ ի նմանէ, որ քան ի տարի և քան ի ամիս մնայցեմ անդ ի գործ իւրեանց՝ մէկ տարին երեք հազար հինգ հարիւր զուուշի հիսապով ասանց այլ և այլ ասութեան՝ ինչ ժամանակ որ ինձ դրամ պիտոյանայցէ, ասնելոց եմ: Իսկ և ի ճանապարհին եղեալ մասրաֆն, թէ այժմ երթալոյս և թէ զկնի աւարտման գործոյն յետ դառնալոյս, և կամ անդ քան ի տարի որ մնայցեմ ի գործ իւրեանց, իմ և ընդ իմ եղեալ սպասաւորիս բոլոր մասրաֆն ինքեանք տալոց են, իմ քսակէս մէկ դրամ մասրաֆ կամ այլ ինչ ելանելոց չէ: Իսկ և սպասաւորին իմոյ տարին հարիւր յիսունական զուուշի վարձ ինքեանք տալոց են: Եւ ահա զայս պայմանս սրարաք ի վերոյ թուոյն (որ է հազար յօթն հարիւր ութսուն և մէկ մայիսի քսան երեքին) և ի նոյն աւուր, իբր սկսելոյ հիսապով զալլ արարաք, որովհետեւ յայնմ աւուր ի ճանապարհ ելաք և վարձկանութեան իմոյ թարեխն ի նոյնոյ աւուր սկսաւ. ուստի և երեք հազար հինգ հարիւր զուուշի փէշին մէկ տարի չէքս առ ի աստ ի Մահաեսի Մելիտանէն, որ մինչև ցհետեւեալ տարւոյ մայիսի 23 օրն լմանոյն վարձս առ ի, և հետեւաբար ամէն տարի երեք հազար հինգ հարիւրական զուուշի ասնելոց եմ, եթէ տէր հասուսցէ: Ուստի Մահաեսի Մելիտանն, վէքիլ և փոխանորդ գուլով վերոյգրեալ Արքային Հերակլայ, յայս միտ ձեռագիր իմն գրեալ ի հաստատութիւն բանից իւրոց՝ ետ ինձ, և ես զսոյն գիր ի հաստատութիւն բանից իմոց գրեալ՝ ետու նմա, որ ինձ ընդունելի է:

Ի փաստ Յիսուսի Քրիստոսի աստուծոյ մերոյ՝ Քրիստոսի ծառայ Պօղոս գպիր Յօնաննիսեան:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Կյուրեղ Մրապյանի արխիվ), Թղթ. № 81ա, վավ. № 6:

Վկայ բանիս աստուած

Կնիք

Γεώργιος Ζαφθρη̅ς μάρτυς

Ἡσαΐας Κηρλή παπᾶς μάρτυς<sup>1</sup>

Ես Գիմիրգիս վկայ

<sup>1</sup> Հունարեն լեզվով գրված է Գեորգիոս Զաֆթրիս վկա, և Իսաիաս Քիրլի բահանա վկա: